ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-222-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» ենթակետերում գումարներն ավելացնել 63.3-ական մլրդ դրամով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածով հաստատված ծախսերի և դեֆիցիտի գումարներն ավելացնել 63,333,900.0 - ական հազար դրամով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

հազար դրամներով

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	Մուտքերի գումարների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով)
ԸՆԴԱՄԵՆԸ	63,333,900.0
այդ թվում՝	
Ա.Ներքին աղբյուրներ-ընդամենը	63,333,900.0

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

հազար դրամներով

Բաժին	Խումբ	Դաս		Հատկացումների գումարների փոփոխություն (ավելացումները նշված են դրական նշանով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	63,333,900.0
			այդ թվում՝	

04			**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	63,333,900.0
			այդ թվում՝	
	03		Վառելիք և էներգետիկա	63,333,900.0
		02	Նավթամթերք և բնական գազ	63,333,900.0

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

հազար դրամներով

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հատկացումների գումարների փոփոխություն (ավելացումները նշված են դրական նշանով)
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	63,333,900.0
այդ թվում՝	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	63,333,900.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
այլ ծախսեր	63,333,900.0

Հոդված 6. Օրենքի N 1 և N 4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն սույն օրենքի համապատասխանաբար N 1 և N 2 հավելվածների:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝ «իրականացումը» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 4-րդ հավելվածով նախատեսված, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի իրացումից ստացված մուտքերի և 1-ին հավելվածով նախատեսվող «Ներ-մուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին» ծախսային ծրագրի գծով կատարվող գործառնությունների» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքի NN 1-2 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ԱՂՅՈՒՍԱԿ N 1

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Հատկացումների գումարների փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	**63,333,900.0**
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ այդ թվում՝	**63,333,900.0**
	03		Վառելիք և էներգետիկա այդ թվում՝	63,333,900.0
		02	Նավթամթերք և բնական գազ	63,333,900.0
			01. Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին	63,333,900.0
			ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	63,333,900.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ԱՂՅՈՒՍԱԿ N 2

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 04-03-02 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Հոդվածի անվանումը	Հատկացումների գումարների փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով)		
	Ընդամենը դասի գումարը (հազար դրամներով)	այդ թվում՝ ըստ ծրագրերի	
		Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին	
		Ընդամենը ծրագրով	այդ թվում՝ ըստ կատարողների
			ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0

ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0
այլ ծախսեր	63,333,900.0	63,333,900.0	63,333,900.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ԱՂՅՈՒՍԱԿ N 3

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

հազար դրամներով

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հատկացումների փոփոխություններ (ավելացումները բերված են դրական նշանով)
15. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	63,333,900.0
02. Ներմուծված գազի դիմաց փոխհատուցում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին այդ թվում՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	63,333,900.0
Բաժին N 04 Խումբ N 03 Դաս N 02	63,333,900.0
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	63,333,900.0
այլ ծախսեր	63,333,900.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ» ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ N 4 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

հազար դրամներով

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	Մուտքերի գումարների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով)
ԸՆԴԱՄԵՆԸ	63,333,900.0
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ-ընդամենը	63,333,900.0

այդ թվում՝	
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	63,333,900.0
այդ թվում՝	
2.1. Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության իրացումից մուտքեր	63,333,900.0

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

Ներկայումս «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով համայնքային բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների ցանկում առկա է նաև իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության օտարումից առաջացող միջոցների 30 տոկոսը: Նման հանգամանքը խնդիրներ է ստեղծում առանձահատուկ իրավիճակներում, երբ պետական շահը գերակայում է համայնքային շահերին, առկա ֆինանսական միջոցները պետական նշանակության խնդիրների լուծմանն ուղղելու տեսանկյունից: Մասնավորապես, նման խնդիր է առաջացել ընթացիկ տարում՝ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի վաճառքից առաջանալիք մուտքերի ամբողջ ծավալը պետական բյուջե մուտքագրման և այդ միջոցների հաշվին գազափոխադրման ենթակառուցվածքների զարգացման նպատակով նշված ընկերությանը փոխհատուցում տրամադրելու բնագավառում:

Կարգավորման նպատակը և բնույթը

Առկա խնդրին լուծում տալու համար առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և « Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Փաթեթ):

Փաթեթի կարգավորման նպատակն է առանձահատուկ իրավիճակներում (տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2013 թվականին կնքված է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին Համաձայնագրի առկայություն), երբ պետական շահը գերակայում է համայնքային շահերին, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության օտարումից առաջացող միջոցների 30 տոկոսը նույնպես ուղղել պետական բյուջե՝ պետական նշանակության խնդիրների լուծմանը: Մասնավորապես, Փաթեթով նախատեսվում է սահմանել, որ մինչև 2014 թվականի հունվարի 31-ը գազի բնագավառում գազափոխադրման ենթակառուցվածքների զարգացման նպատակներով իրականացվելիք գործարքների ֆինանսավորման համար իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից առաջացող միջոցների 100%-ը (շուրջ 63.3 մլրդ դրամ) ուղղվում է պետական բյուջե՝ ներկրված գազի դիմաց «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին փոխհատուցման համար: Նշվածի հետ կապված բյուջետային մուտքերի և ծախսերի կատարման բոլոր ձևակերպումներն Փաթեթով նախատեսվում է իրականացնել ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եզրափակիչ շրջանառությամբ:

Ակնկալվող արդյունքը

Փաթեթի ընդունման արդյունքում կապահովվի պետական գերակա խնդիրների լուծման համար ազատ ֆինանսական միջոցների ստեղծումը, որոնք առաջանում են իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության օտարումից:

Փաթեթով նախատեսվող դրույթների գործողությունն ունի ժամանակային առումով սահմանափակ կիրառություն և դրա ազդեցությունը տարածվում է միայն 2013 թվականի բյուջետային տարվա վրա: